ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 148
վարչական տուգանք նշանակելու մասին

06 ապրիլի 2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանս, քննելով անհատ ձեռնարկատեր Համլետ Հովսեփյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի մարտի 17-ի N 66-17 հանձնարարագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Համլետ Հովսեփյանի մոտ իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2017 թվականի ապրիլի 20-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 23-րդ, 25-րդ կետի 3-րդ ենթակետի և 55-րդ կետերի** պահանջը. այն է՝

- արտադրական սենքերի առաստաղները չեն պահվում նորոգ և պատշաճ վիճակում.
- ապահովված չէր արհեստական օդափոխության համակարգերով.
- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկված չէր պարբերական բժշկական զննությունների:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է անհատ ձեռնարկատեր Համլետ Հովսեփյանը (հասցե՝ ք.Երևան, Ավան, Թումանյան թաղամաս, 6/1-48): Համլետ Հովսեփյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է և մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 238[2]-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով՝ 188-րդ հոդվածի 1-ին մասերով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Համլետ Հովսեփյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրութսունապատիկի չափով՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

????? ??????????